

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Միհեր Քումունց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

hnagetyan18@gmail.com

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Հիմնաբառեր. Հնագիտություն, գիտական արշավախումբ, պեղումներ, եկեղեցի, հնագիտական գտածո, խեցեղեն, «զանգ»:

Նախաբան

Շիկահողը ՀՀ Սյունիքի մարզի Կապանի ենթատարածքի գյուղերից է, գտնվում է Կապան-Մեղրի մայրուղու 22-րդ կմ-ին, «Շիկահող» պետական արգելոցի մերձակայքում: Շիկահող գյուղը՝ անվան Շիկահողք տարբերակով, առաջին անգամ հիշատակվում է Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» մեծարժեք աշխատությունում: Այն նշված է Սյունիքի Կովսական գավառի Տաթևի հայրապետական աթոռին հարկատու գյուղերի ցուցակում (Օրբելյան 1861, 377): Հաջորդ կարևոր վկայությունը Ղևոնդ Ալիշանի հաղորդումն է Վերին Շիկահող գյուղի գոյության վերաբերյալ (Ալիշան 1893, 101, 243, 287–288):

Շիկահողը և նրա շրջակայքը հարուստ են հնագիտական և պատմաճարտարապետական հուշարձաններով: Հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղի տարածքում ապրել և ստեղծագործել են դեռևս վաղնջական ժամանակներից: Գյուղում մեծ թիվ են կազմում հնագույն դամբարանները. դրանցից հայտնի են և պետական ցուցակում գրանցված են «Սպիտակ հողեր», «Կապեն արտ», «Թթու ջուր», «Կարմիր հողեր», «Քարաղբյուր» կոչվող վայրերում տարածվող վաղ երկաթի ժամանակաշրջանի դամբարանադաշտերը, իսկ տարածքի հնագույն բնակատեղին կարելի է համարել «Քարկտոր» հնավայրը, որտեղից հայտնաբերված քարե կացինները թվագրվում են մ.թ.ա. II հազարամյակի վերջով (Խնկիկյան 1973, 234): Այնուամենայնիվ գյուղում գերակշռողը միջնադարյան հուշարձաններն են, որոնք սփռված լինելով գյուղի վարչական սահմանների ողջ տարածքում՝ վկայում են, որ այստեղ միջնադարի բոլոր փուլերում գործել է

* Ստացվել է 21. 08. 2022թ., ուղարկվել է գրախոսման 03. 09. 2022թ., ընդունվել է տպագրության 18. 11. 2022թ.:

բավականին խոշոր համայնք: Միջնադարյան բնակավայրերից են «Ղշլաղը», «Գեղցիանդը», «Վերին Գեղցիանդը» և «Աքլորի քարը»: Տեղացիները այն անվանում են «Որցակքար»: Շիկահողը հարուստ է նաև եկեղեցիներով ու միջնադարյան գերեզմանոցներով, ինչպես նաև, անտառի զանազան վայրերում ծվարած «մենավոր» խաչքարերով: Միջնադարյան հուշարձաններից են «Կոնասար» ամրոցը, «Տերտերանց» ջրաղացը, «Ձորի» եկեղեցին («Ծերիգղեցի»)[1]: Մի եկեղեցի էլ եղել է «Խրավանդ» կոչվող վայրում, իսկ կամարակապ միաթռիչք կամուրջը տարածաշրջանի 5 նմանատիպ միջնադարյան կամուրջներից մեկն է: Ցավոք, վերոնշյալ հուշարձանների մեծ մասը հիմնականում մեզ հասել են ավերված վիճակում, երբեմն միայն հիմքերն են նշմարվում:

Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին

Եկեղեցին բարձունքի վրա կառուցված լինելու շնորհիվ իշխող դիրք է գրավում մյուս բոլոր կառույցների նկատմամբ և տեսանելի է գրեթե բոլոր կողմերից: Եկեղեցուց հարավ պահպանվել է փոքր գերեզմանաբակ: Ցավոք, եկեղեցին չունի շինարարական արձանագրություն, որտեղ նշված կլիներ կառուցման թվականը, սակայն ճարտարապետական առանձնահատկությունների հիման վրա կարելի է թվագրել 17-րդ դդ.: Ամբողջությամբ շարված է ճեղքված գետաքարերով և կրաշաղախով: Թաղածածկ սրահի հորինվածքով միանավ կառույց է: Այս տիպը, ճարտարապետական լուծումները և քարատեսակը բնորոշ են ուշմիջնադարյան Սյունիքի եկեղեցական ճարտարապետությանը, երբ սյունեցիները, օգտվելով համեմատաբար խաղաղ իրավիճակից, սկսեցին մոխրի միջից վեր հանել հոգևոր կյանքը ու գրեթե բոլոր գյուղերում կառուցվեցին եկեղեցիներ՝ գլխավորապես բազիլիկատիպ կառույցներ: Պատերն ունեն խոշոր ճեղքվածքներ: Իր ամբողջ երկայնքով ճեղքվածք ունի նաև եկեղեցու թաղը: Այդ երևույթը բնորոշ է նմանատիպ եկեղեցիներին, երբ որմնամույթերով ամուր կանգնած պատերը ծանրությունից ճկվում են դեպի դուրս՝ ճեղքվածք առաջացնելով տանիքին: Միակ մուտքը բացվում է հարավային ճակատի մեջ: Ունի հինգ պատուհան, որոնցից երեքը բացվում են արևելյան ճակատին, մեկը՝ հարավային և մեկը՝ արևմտյան ճակատներին: Պատուհանները նեքուստ անհամեմատ ավելի լայն են, քան արտաքուստ: Եկեղեցին ունի ընդարձակ թաղակապ սրահ, որի թաղը հենված է մեկ զույգ որմնամույթերից սկսվող կամարի վրա: Որմնամույթերը կամարաձև թռիչքներով կապված են նաև արևմտյան պատին և ավանդատներին: Խորանի երկու կողմերում փոքր մուտքերով ավանդատներն են: Ավանդատների առաստաղները բավականին ցածր են և չի բացառվում, որ դրանց վերևում լինեն դատարկ տարածություններ, որոնք ճարտարապետական տեսանկյունից կարևոր են ոչ միայն պատերին թեթևություն հաղորդելու առումով, այլև հաճախ օգտագործվել են որպես գաղտնարաններ կամ թաքստոցներ: Պայտաձև խորանն ունի 90 սմ բարձրությամբ բեմ, որի վրա տեղադրված է վեմքարը: Խորանի պատին առկա են 5 կամարաձև որմնախորշեր: Հյուսիսային պատին է որմնափոր մկրտարանը: Այն նույնպես ունի կամարաձև

1 Հուշարձանների անունները վերցված են ՀՀ պետական ցուցակից՝ հաստատված 2002 թ.:

վերնամաս: Մկրտարանն ունի քառախորան եկեղեցու հատակագիծ հիշեցնող ավազանափոս: Մկրտարանի դիմաց՝ հարավային պատին, կա ևս մի նմանատիպ որմնախորշ: Եկեղեցու ներսում ողջ հատակը ծածկված էր հողի 5–20 սմ շերտով, սակայն տեղ-տեղ երևում են հատակ հիշեցնող քարեր: Սրահում կատարված աշխատանքների արդյունքում, ի վերջո ամբողջությամբ բացվեց գլաքարե հատակը, որը պահպանվել է գրեթե ամբողջական: Խորանը և ավանդատները նույնպես ունեն այդպիսի հատակ:

Հարդարանքներ

Հարդարման տեսանկյունից եկեղեցին բավականին աղքատիկ է: Նրա պատերը զարդարում են երկրորդական օգտագործման ենթարկված մի քանի կոթողներ՝ հիմնականում ոչ ճիշտ դիրքերով ագուցված: Հարավային ճակատի արևմտյան եզրին, պատի մեջ առկա է խաչաքանդակ անմշակ բազալտ (լայն.՝ 30 սմ, երկ.՝ 110 սմ), որի մակերեսին փորագրված են երկու տարբեր չափերի խաչեր: Նմանատիպ քար (37x107 սմ) կա նաև արևմտյան ճակատին: Դրա վրա նույնպես երկու միանման, սակայն չափերով տարբեր խաչեր են:

Հարթաքանդակված քարեր եկեղեցու ներսում չափազանց քիչ են՝ համաժամանակյա այլ եկեղեցիների համեմատ: Առանձնանում են խորանի բեմառէջքին ագուցված երկու նույնատիպ և նույնաչափ խաչքարերը: Դրանցից ձախակողմյանն ունի 60 սմ բարձրություն և 24–26 սմ լայնք: Դրա ավագ խաչի թևերն ավարտվում են զույգ ակնագնդերով: Խաչաթևերի կազմած չորս անկյուններում պատկերված են սեպաձև թևերով պարզ խաչեր: Խաչի տակ քանդակված է խաչաբարձ ձողը: Հորինվածքի վերին և ստորին հատվածներում առկա է արձանագրություն: Մյուս խաչքարի ավագ խաչն իր ձևով կրկնում է նախորդին: Ստորին թևի երկու կողմերում սեպաձև թևերով մեկական պարզ խաչ է պատկերված, իսկ վերին թևի երկու կողմերում վերադիր խաչաքանդակներ են: Խաչքարն ունի 60 սմ բարձրություն և 20–25 սմ լայնություն: Սա նույնպես ունի արձանագրություն: Երկու խաչքարերի արձանագրություններն էլ դժվարընթեռնելի են, սակայն դրանցից մեկի վրա հստակ ընթերցվում է թվագրությունը. «ՌԿԴ» (1615):

Խաչքարի մի բեկոր (28x19) ագուցված է բեմառէջքի վերևում՝ քանդակազարդ երեսը դեպի վեր: Գլխավոր խաչից պահպանված միակ թևը ունի երկճյուղվող եզրեր, պատված է գծազարդերով: Նրա երկու կողմերում պատկերված են հավասարաթև խաչեր:

Գերեզմանակոթողները

Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու շուրջ ժամանակին գոյություն է ունեցել ընդարձակ գերեզմանոց, որից այսօր, ցավոք, պահպանվել է մի փոքր հատված՝ եկեղեցու հարավային կողմում: Այն, որ թաղումները արվել են ոչ միայն հարավային կողմում, այլ նաև՝ հյուսիսային ու արևելյան կողմերում, փաստվեցին պեղումների ընթացքում բացված թաղումներով, որոնց տապանաքարերը ժամանակի ընթացքում անհետացել են: Պահպանված տապանաքարերից առանձնանում են հետևյալները.

1) Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարը տարածքի ամենից ակնառու հուշակոթողն է՝ ոչ միայն իր աչքի ընկնող սպիտակ գույնի, այլև քարի հղկվածության ու գեղարվեստորեն բարձրարժեք զարդաքանդակների նուրբ մշակման շնորհիվ: Այն նշանավոր Մելիք-Նուբարյանց տոհմի ներկայացուցիչներից մեկի գերեզմանաքարն է: Գտնվում է եկեղեցու հարավային պատից 2 մ հեռավորության վրա: Ունի 124 սմ երկարություն, 64 սմ բարձրություն և 23 սմ լայնություն: Քարի հարավային նիստին քառատող արձանագրությունն է, որն առնված է քարը աջ, վերին ու ձախ կողմերից եզերող զարդագոտու մեջ: Տապանաքարի հյուսիսային նիստին՝ կամարաձև փորվածքի կենտրոնում, պատկերված է պարզ խաչ: Արևելյան կողերեսին երեք ուղղահայաց շարքով պատկերված վեցաթև ծաղիկներ են, իսկ արևմտյան կողերեսին բուրվառի պատկեր է: Տապանաքարի գագաթային մակերեսին պատկերված է գավազան՝ գնդաձև բռնակով: Արձանագրությունը հետևյալն է.

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԻԿԱՀՈՂՑԻ Տ[Է]Ր ՄՈՎՍԷՍ
Ք[Ա]Հ[Ա]Ն[ԱՅ]Ի ՍԻՐՈՒՆԱ[Ջ]ԱՐԴ[2] ՄԷԼԻՔ ՆՈՒԲԱՐԵԱՆՑԻ 13ԻՆ
ՕՔ[ՈՍՏ]ՈՍԻ ՎԱԽՃԱՆԻ 18(7 ?)1 ԱՄԻ ԱՅՍ ՏԱՊԱՆԷՔԱՐՆ
ՇԻՆԵՑԱԻ ՎԱՐԹԱՆ Տ[Է]Ր ՄՈՎՍԷՍԵԱՆ»:

Մովսես քահանայի հիշատակը հավերժացնող այս արձանագրությունը փաստացի գրավոր աղբյուր է ոչ միայն Շիկահող գյուղի մասին, այլև՝ Մելիք-Նուբարյանց նշանավոր տոհմի: Արձանագրության մեջ նշված տարեթիվը պետական ցուցակում ֆիքսված է, որպես 1841, իսկ վկայագրի մեջ՝ 1971 (տապանաքարի վկայագիրը կազմվել է 1996 թ)[3]: Ուշագրավ է, որ նշվում է տապանաքարը պատրաստող վարպետի անունը՝ Վարթան Տեր-Մովսեսեան: Բացառիկ է, որ տապանը արձանագրության մեջ կոչվում է տապանէքար-տապանաքար ձևով:

2) Գտնվում է գերեզմանոցի արևմտյան եզրին: Այն 35x65 սմ չափեր ունեցող, թերմշակ սալ է: Ստորին սրացող մասը խոսում է այն մասին, որ այն ժամանակին կանգնած է եղել ուղղահայաց դիրքով, խրված հողի մեջ: Ուստի այն ավելի շուտ ոչ թե սալատապան է, այլ ուղղաձիգ գերեզմանաքար կամ գլխաքար, ինչպիսիք սովորաբար կանգնեցվում են տապանաքարերի վերնամասում: Սրա հարթեցված մակերեսին կա պատկերված փորագիր պարզ խաչ, որի թևերը եզրերում եռաճյուղվում են՝ նմանվելով եռաժանիների:

3) Գտնվում է նախորդի կողքին: Ունի գրեթե ուղղանկյուն կառուցվածք և նման է սալատապանի: Սակայն այն հանգամանքը, որ քարի ստորին կեսը զուրկ է որևէ պատկերից, ստիպում է ենթադրել, որ սա նույնպես ի սկզբանե կանգնած է եղել ուղղահայաց դիրքով՝ կիսով չափ խրված լինելով հողի մեջ: Քարի մակերեսին պատկերված են 6 միանման, հավասարաթև, պարզ խաչեր: Քարն ունի 43x75 սմ չափսեր:

4) Տձև եզրերով սալատապան է: Մակերեսի վերին աջ հատվածում խաչ է պատկերված, որի թևերը ավարտվում են զույգ ակնագնդերով: Ստորին թևի եր-

---

2 Վերծանումը՝ վիմագրագետ Ա. Հարությունյանի:

3 Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվ

կու կողմերում աստղեր են, իսկ վերին անկյուններում՝ 5 փոսիկներից կազմված նախշ: Խաչի տակ կա արձանագրություն՝ 5 տող, անընթեռնելի ձեռագրով: Դժվարությամբ կարելի է ընթերցել. «այս է տապան» բառերը և էլի մի քանի տառ: Քարի չափսերն են՝ 55–110 սմ:

5) Նույնպես անձև եզրերով, թերմշակ սալատապան է՝ ստորին հատվածը ունի 30 սմ լայնք, իսկ վերինը՝ 56 սմ, երկարությունը՝ 140 սմ: Քարի հարթ մակերեսին, գրեթե ողջ ծավալով փորագրված է խաչ, որից ներքև շրջան, խաչաբարձ ձող, երկաստիճան պատվանդան: Թևերի եզրերին և կազմած անկյուններին կան կորեր: Աջ խաչաթևի տակ կա հազիվ նշմարվող քառատող արձանագրություն, որից ընթերցվում է առաջին տողը. «ԳԻՐԳՈՐ»:

Եկեղեցու մուտքի երկու կողմերում դրված են խաչքարերի մեկական բեկորներ: Դրանցից մեկը 15–16-րդ դդ. խաչքար է, որի ստորին մասը չկա: Ստորին թևը կոտրվածքի պատճառով բացակայում է, մյուս երեք թևերը ավարտվում են երկուական խոշոր ակնագնդերով: Աջ և ձախ թևերից ցած մեկական փոքր պարզ խաչեր են, իսկ վերևում մեծ խաչի կրկնողությամբ փոքր խաչեր: Խաչքարի քիվին կա երկտող արձանագրություն. ԽՏՐԻՇԱՅ: ԱՐՋ ՈԴ: Խաչքարի պահպանված առավելագույն բարձրությունը 48 սմ է, վերին մասի լայնությունը՝ 39 սմ, ստորին մասինը՝ 34 սմ, հաստությունը՝ 10 սմ:

Մյուս քարը, թերմշակ գրանիտ է, կոտրված: Այն պարզ գերեզմանաքար է, ինչպիսիք մեծ տարածում են ունեցել ուշ միջնադարում: Պահպանվել են միայն ակոսագիծ պարզ խաչի ստորին թևը և աջ ու ձախ թևերի բոլորակները: Խաչի տակ կա եռատող արձանագրություն՝ հողմահարված և անընթեռնելի: Հստակ կարդացվում են առաջին երկու տառերը. «ես»[4]:

Կատարված աշխատանքները

2012 թ. «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը (նախագահ՝ Գ. Գևոնյան) հանդես եկավ ծրագրով, ըստ որի նախատեսվում էր վերականգնել Շիկահողի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին, բարեկարգել հարակից տարածքը: Նույն տարում ճարտարապետներ Ս. Նալբանդյանի և Ա. Բաղիշյանի կողմից ամբողջությամբ չափագրվեց եկեղեցին, քարտեզագրվեց եկեղեցու շրջակա տարածքը, որից հետո կազմվել է եկեղեցու տեխնիկական վիճակի նկարագիրը և սեյսմիկ եզրակացությունը: Նախաձեռնող կողմի՝ ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնին (այդ ժամանակ տնօրեն՝ Հ. Սիմոնյան) ուղղված նամակ-դիմումի հիման վրա կազմվում է արշավախումբ (ղեկավար՝ Ա. Նալբանդյան), ինչով և սկիզբ է դրվում Շիկահողի եկեղեցու ուսումնասիրման աշխատանքների նոր և հանգամանալից փուլին[5]:

Մինչ պեղումներին անցնելը կատարվեցին տարածքի բուսածածկույթից

---

4 Այս երկու քարերը, ինչպես պարզեցի տեղացիների հետ զրույցներից, այստեղ են տեղափոխվել Խրավանդ կոչվող հնավայրից:

5 Արշավախմբում բացի տեղացիներից կազմված բանվորական ջոկատից, ներգրավվում են նաև Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Կանադայից, Անգլիայից և Ռուսաստանից ժամանած 17 անդամ-կամավորականներ՝ Արեն Բասմաջյանի խմբապետությամբ:

մաքրման և, միաժամանակ, հետազոտման աշխատանքներ, որոնք տվեցին նշանակալի արդյունքներ: Մասնավորապես տանիքում կատարված աշխատանքների ժամանակ հայտնաբերվեցին խաչքարերի բեկորներ: Սև տուֆի մի բեկորի վրա (30x30 սմ) շրջանի մեջ առնված սեպաձև թևերով հավասարաթև խաչ է: Խաչապատկեր քար հայտնաբերվեց նաև խորանին: Պեղումներ իրականացվեցին ինչպես եկեղեցու ներսում՝ սրահի, խորանի և երկու ավանդատների տարածքում, այլև եկեղեցու շուրջ, հարավային տապանաբակի տարածքում և այն պատնեշող հենապատի հիմքերի մոտ:

Գտածոներ

Պեղումների ընթացքում գտնված ամենազանգվածային նյութը, իհարկե, խեցեղենն էր, որը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ շինարարական և կենցաղային:

Շինարարական խեցեղենը արտահայտվում էր մեծ մասամբ կիսափողրակաձև կղմինդրների, և խիստ սակավ՝ հարթ կղմինդրների տեսքով: Տանիքից հայտնաբերվեցին կիսափողրակաձև տիպի կարմրավուն մակերեսով հազարավոր կղմինդրներ՝ մեծ մասամբ բեկորային վիճակում: Քիչ չէին նաև ամբողջական կամ թերի պահպանված կղմինդրները: Դրանք ունեն 40 սմ երկարություն և մեծ մասամբ 12–16 սմ լայնություն, սակայն կան նաև 17–18 սմ լայնություն ունեցողները: Լայն եզրերում պատերը հաստ են՝ 2.5 սմ, իսկ նեղ եզրերում պատերի հաստությունը 1 սմ է: Յուրաքանչյուր կղմինդր եզրում ունի աննշան ներճկվածություն՝ կղմինդրաշարի հաջորդող կղմինդրին ամրանալու համար: Լայն եզրում դրանք ունեն մատնեքված երկար գծեր: Բացի կղմինդրից տանիքում գտնվեց 13.2 սմ երկարությամբ և լայն գլխիկով երկաթե խոշոր գամ, ինչպիսիք օգտագործվել են կղմինդրե ծածկը ամրացնելու նպատակով:

Մեծ թիվ են կազմում տնտեսական խեցանոթների տարբեր տիպերի բեկորները, որոնց մեջ առկա են նաև սակավաթիվ 14–15-րդ դդ. ջնարակված բեկորներ: Բեկորների մի մասը կրում է պարզ զարդանախշեր, որոնք կարելի է առանձնացնել երկու խմբի. ա/ վերադիր զարդագոտի, որն իր հերթին պատված է փոսիկների կամ գծիկների շարքերով, բ/ սանրատամ գործիքով արված ալիքաձև կամ ուղիղ (կամ երկուսը միասին) նախշազարդեր: Ուշագրավ է նրբիրան, բարակ պատերով անոթի բեկորը, որն իր մակերեսին ունի կոճականման, շրջանաձև ելուստ: Գտնված կանթերը հիմնականում միջնադարին բնորոշ աղեղնաձև տիպի կանթեր են: Դրանց մեջ առանձնանում է ուղղաձիգ կառուցվածքով և դեպի դուրս լայնացող կանթը (երկարությունը՝ 9 սմ): Գտնվեց նաև շրջանաձև կտրվածքով, կորացող կառուցվածքով բռնակ: Այն, կարելի է ենթադրել ունեցել է հորիզոնական դիրք կամ եղել է խփի բռնակ: Երկարությունը՝ 9.3 սմ: Միջնադարյան այս կանթերին զուգահեռ հայտնաբերվեցին նաև մի քանի վաղբրոնզեդարյան գնդաձև կանթեր (Բադալյան 2015, 69–71, 85, 153–159): Դրանցից մեկը խոշոր տարայի պատկանող, մոխրագույն մակերեսով, լավ պահպանված կանթ է: Ունի 5.5 սմ բարձրություն և 2.8 սմ լայնություն: Երկրորդը շագանակագույն է, կոտրված և պատված այրվածքի հետքերով: Ունի 5.5 սմ բարձրություն և 2.7 սմ լայնություն: Երրորդ նմու-

շի մակերեսը կրեմագույն է, կոկափայլ, աստառը՝ գորշ, բարձրորակ թրծումով: Բեկորի չափսերն են 7x6 սմ, կանթի բարձրությունը՝ 4.5 սմ, լայնությունը՝ 2.5 սմ: Կուր-Արաքսյան մշակույթին ընորոշ կանթերի առկայությունը Շիկահողի եկեղեցու մոտ, 45–60 սմ խորությունում վկայում են, որ եկեղեցին կառուցվել է վաղագույն դամբարանադաշտի տարածքում, և դրանց հայտնվելը ուշմիջնադարյան գերեզմանների մակարդակում կարելի է բացատրել նրանով, որ թաղումները կատարելու ժամանակ շերտերը խաթարվել են և վաղ շերտերի հնագիտական իրերը հայտնվել են վերին շերտերում:

Գտնվեցին սաջի մի քանի բավական փխրուն և քայքայվող բեկորներ, երեք տարբեր կարասների պատկանող բեկորներ: Դրանցից մեկը հաստ պատերով (2.3 սմ) խոշոր կարաս է, որի բեկորներից մեկի վրա կա միջանցիկ գայլիկոնված անցք: Մյուսը համեմատաբար նուրբ պատերով (պատերի հաստությունը 2սմ) լայնաբերան կարասի բեկորներ են: Թրծումը միջին որակի է, ավազախառն, մակերեսը բաց դարչնագույն է, տեղ-տեղ մրի հետքերով, աստառը՝ քայքայված: Երրորդ անոթից պահպանված է միայն մեկ բեկոր: Այն ուղիղ դրված, գագաթը հարթ կտրած շրթի հատված է, պատի հաստությունը՝ 2.5 սմ: Մակերեսը բաց դարչնագույն, թրծումը՝ միջին որակի, ավազախառն, դուրգի հետքերով:

Ջնարակված բեկորները թեև քիչ են, սակայն կան մի քանի ուշագրավ նմուշներ և կարելի է ենթադրել, որ դրանք հիմնականում պատկանել են օղակաձև կարճ նստուկով թասիկների: Դրանցից մեկը հատակի հատված է, որի աստառը ամբողջությամբ պատված է սպիտակ ջնարակով: Աստառի կողմից ունի հորիզոնական և ուղղահայաց իրար հատվող ներճկված գծեր: Եվս մի բեկոր թե՛ իրանի և թե՛ աստառի կողմից պատված է բաց կապույտ ջնարակով: Աստառի կապույտ ֆոնի վրա սևով արված են կոր գծազարդեր:

Բացի կենցաղային նշանակության կավե անոթների բեկորներից գտնվեցին կավե այլ իրեր ևս: Հատկապես աչքի է ընկնում կոկիկ մշակված, անիվանման, գորշադարչնագույն մակերեսով իլիկի գլխիկը, որի եզրերը կոր են, կողերը՝ ուռուցիկ: Ունի 5.2 սմ տրամագիծ, իսկ կենտրոնում գտնվող միջանցիկ անցքի տրամագիծը 0.8 սմ է (Բաղալյան 2015, 226–227, 231):

Եկեղեցու սրահում գտնված խեցեղեն իրերից առանձնանում է մուտքից աջ, մոտ 10 սմ խորությունում գտնված կավե ձիթաճրագը: Այն ունի մոտ 3.5 սմ բարձրություն, ուռուցիկ հատակ, կարճ պատեր և դեպի ներս ճկված շուրթ: Շրթի մի հատվածում առկա է ծորակ, որը պատված է մրի և այրված ձեթի հետքերով: Շիկահողի պեղումներից հայտնաբերված այս միակ ճրագը իր զուգահեռներն ունի Հայաստանի մի շարք հուշարձաններում (Միրիջանյան 2019, 108–121): Մասնավորապես՝ նմանատիպ ճրագներ գտնվեցին Սյունիքի վերջին տարիներին պեղված ուշմիջնադարյան հուշարձաններում, ինչպիսիք են՝ Տեղի Ս. Գևորգ, Հին Գորիսի և Սրաշենի Ս. Հռիփսիմե եկեղեցիները:

Կավե իրերից բացի գտնվեցին չափազանց հետաքրքիր այլ իրեր ևս, որոնցից առաջին հերթին պետք է նշել տանիքի հողահեռացման և ուսումնասիրման աշխատանքների ժամանակ հայտնաբերված երկաթե դաշույնը: Այն լավ է պահպանված, երկշեղը է, ծայրը՝ սուր: Մեջտեղով՝ բռնակից մինչև ծայրը առկա է ակո-

սագիծ: Բռնակը նույպես երկաթից է, սակայն պահպանված փայտի մնացորդները վկայում են, որ այն ունեցել է նաև փայտե մակերես: Պահպանվել են գամեր՝ երկու փոքր, որոնցով բռնակն ամրացվել է շեղբին և մեկ մեծ՝ փայտե մակերեսը երկաթին ամրացնելու համար: Դաշույնի ընդհանուր երկարությունը 43 սմ է, իսկ միայն շեղբինը՝ 33 սմ: Այն գոտու մեջ պահվող, 18-րդ դ. բնորոշ սուր է, ինչը մեծ կիրառություն ուներ այդ դարասկզբին ծավալված ազատագրական պայքարի ժամանակ: Մետաղական գտածոներից են նաև օղակաձև գլխիկով և կարճ՝ հավանաբար կոտրված, պոչով երկաթե բանալին (երկ.՝ 4.2 սմ), գամերը և այլն:

Եզակի հայտնագործություն կատարվեց եկեղեցու հարավային ավանդատան պեղումների ժամանակ. այստեղ նախ գտնվեց ազնվացեղ եղջերուի եղջյուրից մոտ 18 սմ երկարությամբ, սակայն կոտրված գործիք, որի մի եզրում հարթ կտրված և հղկված է, իսկ մյուս՝ սուր եզրին նկատելի է օգտագործման հետևանքով առաջացած մաշվածությունը: Նույն ավանդատան արևելյան եզրի մոտ, ընդամենը 6 սմ խորությունից հայտնաբերվեց բրոնզից թասանման առարկա՝ միատող արձանագրությամբ՝ ՈՍԿԱՆԻ ՈՐԴԻ ՂՈՆՃԱՅ (ըստ Աճառյանի այս իգական անունը գործածվել է 15–18-րդ դդ. և ծագել է պարսկերեն «կոկոն» բառից, Աճառյան 1942, 145): Այն եկեղեցական նվագարան է, ինչպիսիք գործածական են եղել հատկապես Նոր Ջուղայում և դրա շրջակայքում: Ջուղայում այն պարզապես կոչում են «Ջանգ» և օգտագործում տնօրինեքների և հարսանիքների ժամանակ: Ինչպես հին լուսանկարներում և գեղանկարներում է երևում այն սովորաբար եղել է թափորի առջևով գնացող երեխայի ձեռքում և կարելի է ասել, որ դրանք օգտագործվել են ժողովրդին կոչ անելու, հաղորդելու թափորի ժամանելու լուրը: Այս նվագարաններն ունեցել են նաև ձող, որոնք կարճ պարանի միջոցով ամրացել են նվագարանի կենտրոնի անցքին ու նվագարանին հարվածելիս զրնգուն ձայն արձակել[6]: Մեր գտած նմուշն ունի ճեղք, բերանի բացվածքը՝ 9 սմ, 4 սմ բարձրություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕՐԲԵԼԵԱՆ 1861 – Ստեփաննոս եպիսկոպոս Սիւնեաց, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861:

ԱՃԱՌԵԱՆ 1946 – Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, Հ. 3, Երևան, 1946:

ԱԼԻՇԱՆ 1893 – Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893:

ԲԱԴԱԼՅԱՆ 2015 – Բադալյան Ռ., Շենգավիթ, Կատալոգ, Հայաստանի պատմության թանգարան, Երևան, 2015:

ԽՆԿԻԿՅԱՆ 1973 – Խնկիկյան Օ. Հետախուզական պեղումներ Ղափանի շրջանում (1970 – 1971), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1973, N 3, էջ 234 – 240:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ 2019 – Միրիջանյան Դ., Նալբանդյան Ա., Լուսավորության միջոցները թաղման ծեսում, «Բանբեր Հայագիտության», Երևան, 2019, N 3, էջ 108 – 121:

6 Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում երաժշտագետ Ռուբեն Կնիասեանին և Արմեն Տեր-Կիւրեղեանին արժեքավոր տեղեկությունների և լուսանկարների տրամադրման համար:

Arman Nalbandyan

"Historical and Cultural Heritage Research Center" SNCO of Ministry of Education, Science, Culture and Sports of RA,

Institute of Archaeology and Ethnography of NAS RA

hnagetyan18@gmail.com

THE EXCAVATIONS RESULTS OF THE CHURCH OF ST. STEPANOS OF SHIKAHOGH

Keywords: Archaeology, scientific expedition, excavations, church, artifacts, pottery, "bell".

Shikahogh is a village in the Syunik region of RA, in the subarea of Kapan situated on the 22nd km of the Kapan-Meghri highway. The village and its surrounding area are full of archaeological and historical-architectural monuments. The church of St. Stepanos the Nakhavka (Forefather) and its southern cemetery are the first to excel among those monuments.

Unfortunately, the church doesn't have a construction record where the construction date would have been mentioned but taking into account its architectural features the church can be dated back to the 17th century the earliest.

In 2012 the organization "Land and culture" (president G. Gevonyan) came up with a program according to which it was planned to reconstruct the church of St. Stepanos the Nakhavka of Shikahogh and to improve its surrounding territories. In the same year the church was fully measured, the surrounding area was mapped by architects S. Nalbandyan and A. Badishyan after which a description of the technical condition and seismic conclusion were drawn. Based on the letter-application of the initiative side addressed to "Historical and cultural heritage research center" (director H. Simonyan) an expedition was formed (head of expedition A. Nalbandyan) which gave a start to a new and thorough phase in the research process of the church of Shikahogh.

The excavations were carried out in 2013 and the church's base and the floor were found in 1 month. The medieval cultural layer was studied and a lot of discoveries were made. The list of artifacts covered a wide layer of medieval culture: gravestones, glazed and non-glazed pottery, construction pottery, metallic objects, etc. Especially noteworthy are the clay lampshade, the head of a bobbin, the iron dragger and the church bronze musical instrument-"bell".

The excavations became the basis for the reconstruction of the church which was carried out by the initiative of the organization "Land and culture" in 2014–2016.

Арман Налбандян

"Научно-исследовательский центр историко-культурного наследия" ГНО при Министерстве образования, науки, культуры и спорта РА,

Институт археологии и этнографии НАН РА

hnagetyan18@gmail.com

РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК ЦЕРКВИ СВ. СТЕПАНОСА НАХАВКА (СВ. СТЕПАНОСА ПЕРВОМУЧЕНИКА) В ШИКАОХЕ

Ключевые слова: Археология, научная экспедиция, раскопки, церковь, находки, керамика, «колокол».

Шикаох-одно из сел Капанского района Сюникского марза РА, расположенное на 22-м км автодороги Капан-Мегри. Деревня и ее окрестности богаты археологическими и историко-архитектурными памятниками, среди которых в первую очередь

выделяются церковь Св. Степаноса Нахавка (Св. Степаноса Первомученика) и кладбище на ее южной стороне.

К сожалению, Церковная летопись отсутствует, в которой бы указывалась дата постройки, но по архитектурным особенностям ее можно датировать не ранее XVII века.

В 2012 году Организация "Еркир ев мшакуйт"(«Страна и культура») (председатель Гевонян Г.) разработала план, восстановления церкви Св. Степаноса Нахавка (Св. Степаноса Первомученика) в Шикаох и благоустройству прилегающей территории. В том же году архитекторы С. Налбандян и А. Бадишян провели полный обмер церкви, картографию территории вокруг неё, после чего были составлены описания технического состояния церкви и сейсмическое заключение.

На основании письма-заявки, адресованной в Научно-исследовательский центр историко-культурного наследия Министерства культуры РА (в то время директор А. Симонян), создаётся экспедиция (руководитель А. Налбандян) для проведения ознакомительных раскопок, которые поспособствовали началу нового и основательного этапа изучения церкви в Шикаох.

Раскопки проводились в 2013 году, и через месяц работы были обнаружены фундамент и пол церкви. Был изучен средневековый культурный слой, сделаны много открытий. Находки включали широкий спектр средневековой культуры: надгробные памятники, неглазурованную и глазурованную керамику, строительную посуду, изделия из металла и многое другое. Особого внимания заслуживают глиняный светильник, пряслице, железный кинжал и бронзовый церковный музыкальный инструмент с надписью.

Раскопки послужили основанием для реставрации и восстановления церкви Св. Степаноса Нахавка (Св. Степаноса Первомученика), по инициативе организации "Еркир ев мшакуйт"и проводились они в 2014–2016 годах.

Արման Նալբանդյան

Շիկահողի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու պեղումների արդյունքները

Նկ. 1. Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու ընդհանուր տեսքը (Լուսանկարի հեղինակ Ս. Նալբանդյան)



Նկ. 2. Եկեղեցու հատակագիծը (Ս. Նալբանդյան, Ա. Բաղիշյան)
Գծանկարի հեղինակ՝ Ս. Նալբանդյան, Ա. Բաղիշյան

Նկ.3. Բեմառէջքին ագռցված զույգ խաչքարերը (Լռսանկարի հեղինակ՝ Ս. Նալբանդյան)

Նկ.4. Մելիք - Նուբարյանցի գրապանաքարը (Լռսանկարի հեղինակ՝ Ս. Նալբանդյան)

Աղ.1. Պեղումներից հայտնաբերված արձանագիր «Զանգը», լավ պահպանված մեկ այլ նմուշ և դրա կիրառության արտացոլումը՝ լռսանկարի և գեղանկարի միջոցով: (Նկարները գրամադրել է Ա. Տեր-Կյուրեղյանը)



Աղ.1. Պեղումներից հայտնաբերված արձանագիր «Զանգը», լավ պահպանված մեկ այլ նմուշ և դրա կիրառության արտացոլումը՝ լռսանկարի և գեղանկարի միջոցով: (Նկարները գրամադրել է Ա. Տեր-Կյուրեղյանը)